«Հաստատում եմ»

Հայաստանի շախմատային ֆեդերացիայի

նախագահի առաջին տեղակալ՝ Ս.Լպուտյան

«28» «փետրվար» 2024թ.

Հայաստանի աղջիկների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի աղջիկների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարը կանցկացվի Հայաստանի շախմատի ակադեմիայում (հասցե՝ Շևչենկո 34, ք. Երևան, ՀՀ) ս/թ. մարտի 21-ից մարտի 31-ը:

Մրցաշարն անցկացվում է հետևյալ տարիքային խմբերով.

ա) մինչև 10 տարեկան (2013 թ. դեկտեմբերի 31-ից հետո ծնվածներ) աղջիկներ

բ) մինչև 12 տարեկան (2011 թ. դեկտեմբերի 31-ից հետո ծնվածներ) աղջիկներ

գ) մինչև 14 տարեկան (2009 թ. դեկտեմբերի 31-ից հետո ծնվածներ) աղջիկներ

դ) մինչև 16 տարեկան (2007 թ. դեկտեմբերի 31-ից հետո ծնվածներ) աղջիկներ

Մրցաշարն անցկացվում է ՖԻԴԵ-ի շախմատի կանոնների համաձայն, շվեյցարական մրցակարգով, 9 խաղափուլով: դ) մրցաշարը (մինչև 16 տարեկան աղջիկներ), մասնակիցների քիչ քանակի դեպքում, հնարավոր է անցկացնել նաև նաև շվեյցարական 7 խաղափուլով կամ շրջանային մրցակարգով:

Հավասար միավորներ վաստակելու դեպքում բոլոր մրցաշարերում տեղերը կորոշվեն ըստ.

1. հատված Բուխհոլց - 1 ցուցանիշի
2. գումարային Բուխհոլցի ցուցանիշի
3. սև գույնով խաղացած պարտիաների առավելագույն քանակի
4. հաղթանակների առավելագույն քանակի

Ժամակարգը՝ յուրաքանչյուր մասնակցի տրվում է 90-ական րոպե մինչև պարտիայի ավարտը՝ յուրաքանչյուր քայլի համար 30 վայրկյան հավելումով՝ սկսած առաջին քայլից:

<u>Հայաստանի առաջնության ուղեգրեր:</u> Հայաստանի աղջիկների առաջնության եզրափակիչ փուլին մասնակցելու իրավունք կնվաճեն այն շախմատիստուհիները, ովքեր իրենց տարիքային խմբերում կգրավեն հետևյալ տեղերը.

	Մինչև 10	**Մինչև 12**	**Մինչև 14**	**Մինչև 16**
Աղջիկներ	12	10	7	5

Բացման արարողություն	23 մարտի, 11:30
1-ին խաղափուլ	23 մարտի, 12:00
2-րդ խաղափուլ	24 մարտի, 11:00
3-րդ խաղափուլ	25 մարտի, 11:00
4-րդ խաղափուլ	26 մարտի, 11:00
5-րդ խաղափուլ	27 մարտի, 11:00
6-րդ խաղափուլ	28 մարտի, 11:00
7-րդ խաղափուլ	29 մարտի, 11:00
8-րդ խաղափուլ	30 մարտի, 11:00
9-րդ խաղափուլ	31 մարտի, 11:00
Փակման արարողություն	31 մարտի, 17:00

- Խաղասկզբից ուշացման թույլատրելի ժամանակը սահմանվում է 30 րոպե:
- Խաղասրահ չի թույլատրվում ներկայանալ բջջային հեռախոսներով և սմարթ ժամացույցներով, հակառակ դեպքում խաղացողին կգրանցվի պարտություն:
- Մրցաշարի ընթացքում մարզերը ներկայացնող մասնակիցների և նրանց մարզիչների ծախսերը (ճանապարհածախս, հյուրանոց, օրապահիկ) հոգում է գործուղող կազմակերպությունը:

Մարզերի և Երևանի մարզադպրոցների հայտերն ուղարկել info@chessfed.am էլ. հասցեին՝ համաձայն սահմանված ձևաչափի: Երևանյան ընտրական փուլում ուղեգրեր նվաճած մասնակիցների տվյալները ևս ներառել հայտերում:

Հայտերի ընդունման վերջնաժամկետն է մարտի 15-ը:

Հարցերի դեպքում կարող եք զանգահարել 010/099/ 440105 հեռախոսահամարով:

Մրցաշարի գլխավոր մրցավար՝
ՄՄ Անուշավան Առաքելյան